ՀՐԱՎԵՐ N Տ 3

25.11.2016թ.

2016թ. Նոյեմբերի 25-ին «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, այսուհետ՝ ԻՀԱ, պաշտոնական կայքում (www.armla.am) հրապարակված հայտարարության հիման վրա տրամադրում ենք Ձեզ սույն հրավերը:

Գնման առարկա է հանդիսանում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով նախատեսված արտաքին ծրագրային (բովանդակային) գնահատում:

Հայտը պետք է պարունակի հղում սույն հրավերի վրա, Գնման առարկայի գինը, պատրաստման ժամկետը և որակի մասին տեղեկությունները:

Մասնակցության համար Ձեր կողմից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտ
2. Հայտարարություն

Մրցույթի հաղթող կճանաչվի այն իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը կներկայացնի ամենացածր գնով, սեղմ ժամկետներում և պահանջվող որակով Գնման առարկայի պատրաստման հայտ:

Խնդրվում է հաշվի առնել, որ արտաքին ծրագրային գնահատման համար նախատեսված վճարումը պետք է կատարվի Եվրոպական միության օժանդակությամբ և ազատված են ԱԱՀ-ից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոհամայնքի միջև կնքված 2006 թվականի ապրիլի 4-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի, վավերացված՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից և 2009թ-ի սեպտեմբերի 23-ին ընդունված 1112-Ն որոշման և նրա հավելվածի:

Հայտերը պետք է ուղարկվեն կամ ներկայացվեն ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2 հասցեով՝ մինչև 2016թ. Դեկտեմբերի 6-ը:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները կարող եք ստանալ ԻՀԱ գնման հանձնաժողովի նախագահ Արտակ Սարիբեկյանից՝ զանգահարելով 010 580298 հեռախոսահամարով:

Հայտերը բացվելու են 2016թ. Դեկտեմբերի 7-ին, ժամը 16:00-ին:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այցելելով ծրագրային կայքը հետևյալ հասցեով http://iravaban.net/en/eu-project-en:

Հարգանքով՝

Կարեն Զաղոյան